ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

ՀՀ ԿԳՄՄՆ <<Մարտունու Տ. Աբրահամյանաի անվան ավագ դպրոց>> ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Թեմա՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Անցկացման վայրը՝ Վայքի ավագ դպրոց, Խումբ 2

Աշխատանքի ղեկավար՝ Կիմա Օհանեսյան

Ռ. լեզվի ուսուցչուհի՝ Անահիտ Եղոյան

Դպրոց՝ Վայքի հիմնական

ՎԱՅՔ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3
Սովորողի արժեհամակարգի վրա ազդող գործոնները 5
Ուսուցչի դերը արժեհամակարգի ձևավորման գործընթացում 7
Ռուսաց լեզվի դերը որպես արժեհամակարգի ձևավորման միջոց 10
Արժեհամակարգի ձևավոնումը որպես արդի մանկավարժության կարևոր պահանջ 14
Եզրակացություն 17
Օգտագործված գրականության ցանկ 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից հասարակությունն արմատական փոփոխությունների մի բարդ շրջան է անցնում: Դա անմիջականորեն ազդում է երիտասարդ սերնդի մտածելակերպի, գործելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա: Նա այդ գործընթացների մասնակիցն է, այդ արժեքների ժառանգորդն ու կրողը: Նրա առջև ծառանում է նոր ժամանակի պահանջներին համապատասխան վերափոխվելու, կարողությունները զարգացնելու և իրացնելու խնդիրը:

Ներկայումս կրթությունը վերաճել է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցություն, հանդուրժողականություն, համագործակցություն և արժեքային անհրաժեշտ որակներ: Նոր իրավիճակը համարժեք մոտեցումներ է պահանջում: Նոր սերնդի համար ժամանակակից աշխարհն իր արժեքային համակարգով բավականին բարդ ու անկանխատեսելի է թվում: Իսկ որո՞նք են այդ արժեքները և ի՞նչ մեխանիզմներով պետք է դրանք հասցնել սովորողներին: Արագընթաց փոփոխությունների նոր արժեքների այդ հորձանուտում երիտասարդ սերունդը դժվարանում է իր համար արժեքային կողմնորոշումներ ձևավորել:

Երեխաների կրթության մասին խոսելիս՝ մենք հաճախ օգտագործում ենք <<արժեքներ>> հասկացությունը: Բոլորս կարևորում ենք արժեքների ձևավորումը գալիք սերնդի մոտ և միգուցե այդ բառին ինչ որ ենթագիտակցական իմաստ ենք հաղորդում: Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ պետական չափորոշիչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է տա դպրոցը: <<Արժեհամակարգ>> հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավականին լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, մշակութային և էթիկական արժեքների համախումբն է, որը անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար:

Աշակերտի մեջ արժեհամակարգի ձևավորման գործընթացը առավել արդյունավետ կլինի, եթե.

- Պետությունը կրթությունը և ուսուցչին դիտարկի որպես պետականաշինության համար առաջնային օղակ
- Ուսուցիչը՝ որպես ռեսուրսի աղբյուր
- Ուսուցիչը՝ մոտիվացնող և քաջալերող դեր

Արժեքային համակարգի ձևավորումը ուսումնական գործընթացում կրթության կարևոր և անփոխարինելի մաս է կազմում:

Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակարթական բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, արժեքների ձևավորման առումով մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը։

Նպատակը. Ձևավորել աշակերտի մոտ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ աշխարհի նկատմամբ։ Այն իրականացվում է ուսումնական հաստատությունների, մանկապատանեկան կառույցների, տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով։ Թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են <<տեղեկատավական աղբյուրներից հոսող>> հերոսների վարքագծում։

Խնդիրներ. Աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն։

Արժեհամակարգի մեջ կուտակված անցյալի փորձի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում։ Ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների։ Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները։

ՍՈՎՈՐՈՂԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Արժեքը աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի և ինֆորմացիայի, այլև սեփական կենսափորձի հիման վրա: Նեղ իմաստով՝ արժեքը մարդու համար իրի, առարկայի կամ երևույթի դրական նշանակությունն է: Արժեքը մարդու վերաբերմունքն արտահայտող ցուցանիշ է, որի կարևոր կատեգորիաներից է հավատն ու սերը: Հավատը ծնում է հույս և մղում մարդուն ապրելու, ստեղծելու, արարելու: Հավատը դառնում է կողմնորոշիչ մարդու կյանքի և գործունեության համար: Մարդիկ քանի դեռ ապրում են՝ հավատում են, քանի դեռ հավատում են՝ ապրում են:

Սերը մյուս մարդկանց հետ միավորվելու ձգտումն է: Սիրո մեջ միավորվում են մարդու արժեքային պատկերացումները: Այն բաղկացած է մի քանի մակարդակներից: Այլասիրությունը ուրիշին սիրելու, իսկ եսասիրությունը՝ սեփական անձը սիրելու երևույթն է:

Նաև կան սիրո առանձնացված դրսևորումներ: Օրինակ՝ սերը անհավասարների միջև, երբ միայն տալիս ես՝ առանց վերադարձի ակնկալիքի: Սիրո այդ ձևն անվանում են մայրական: Հաջորդը սերն է հավասարների միջև՝ երբ ինչքան տալիս, նույնքան ստանում ես: Օրինակ՝ եղբայրական սերը:

Սերն անհատական ընտրողական զգացում է, որը դրսևորվում է խորը և կայուն ապրումներում: Ըստ Հեգելի՝ սիրո ճշմարիտ էությունն այն է, որ հրաժարվես ինքդ քեզ գիտակցելուց, մոռանաս քեզ ուրիշի <<Ես>>-ի մեջ և այնուամենայնիվ, այդ կորսվածության ու մոռացվածության մեջ առաջին անգամ գտնես և տիրապետես քեզ: Սերն ապրում է, որն ըստ Հեգելի չի հենվում խորհրդածությունների և դատողականության վրա, այլ բխում է զգացմունքից: Սերը խիստ անհատական և անկրկնելի ապրում է: Ամեն մեկը յուրովի է սիրում: Սիրո մեջ մարդն ավելի պահանջկոտ է դառնում ինքն իր նկատմամբ, ձգտում ինքնակատարելագործման: Ահա թե ինչու սերը մշակութային և գեղեցիկ երևույթ է:

Հաճախ արժեք է համարվում ճշմարտությունը, հատկապես բարու և գեղեցիկի հետ կապվելիս: Բարու, գեղեցիկի, արդարի միասնության սկզբունքը գալիս է Սոկրատեսից, ով փիլիսոփայական գիտելիքը բաժանում է տեսականի (որի կրողը նա համարում է ճշմարիտը), գործնականի (բարին), գեղարվեստականի (գեղեցիկը): Ճշմարտությունը միայն որոշակի սոցիալ-մշակութային պայմաններում է ձեռք բերում արժեքային նշանակություն, իսկ գոյաբանական և իմացաբանական իմաստներով ըմբռնված ճշմարտությունը արժեքաբանորեն չեզոք են: Կյանքում հաճախ ճշմարտությունը զոհաբերվում է արժեքներին: Եթե Արիստոտելն առաջնորդվում էր <<թեև Պլատոնը բարեկամս է, բայց ճշմարտությունը թանկ է>> սկզբունքով, ապա շատերն առաջնորդվում են <<թեև ճշմարտությունը թանկ է, բայց Պլատոնը բարեկամս է>> սկզբունքով:

Արժեքների ձևավորման ուսումնասիրության մեջ իր ուրույն տեղն ունի Մ. Մեսսեյը: Հեղինակը կարծում է, որ մարդու արժեքային համակարգը ձևավորվում է մի քանի փուլերի ընթացքում.

1-ին փուլ – Դրոշմի: Այս փուլը ընդգրկում է երեխայի՝ մինչև 7 տարեկան դառնալը:

Ըստ Մ. Մեսսեյի՝ երեխաներն այս փուլում նման են սպունգի, կլանում են այն ամենը, ինչը տեղի է ունենում իրենց շրջապատում և ընդունում են գրեթե ամեն ինչ որպես բացարձակ ճշմարտություն, հատկապես, եթե դա փոխանցում են ծնողները:

2-րդ փուլ – Կրկնօրինակման: Այս փուլը ընդգրկում է երեխաների 8-13 տարեկան հասակը: Այս փուլում երեխաները կրկնօրինակում են իրենց ծնողներին, ուսուցիչներին, համադասարանցիներին, շրջապատող մարդկանց:

3- րդ փուլ – Սոցիալականացման: Այս փուլը տևում է 13 տարեկանից մինչև 21 տարեկանը : Այս փուլում երեխաների համար շատ կարևոր է իրենց հասակակիցների կարծիքը և կրում են նրանց ուղիղ ազդեցությունը իրենց վրա: Արժեքների ձևավորման այս փուլում, շատ մեծ ազդեցություն ունեն հուզական իրադարձությունները:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են ըստ տարիքային առանձնահատկությունների: Շատ կարևոր է մանկավարժների կողմից աշակերտների մեջ կյանքի նկատմամաբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր տարվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումը:

Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդում են միջանձնային հարաբերությունները, կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, ընկերներ, մեծահասակներ և այլն): Նրանցից աշակերտները կարող են ստանալ արժեքների նկատմամբ ինչպես դրական մոդելներ, այնպես էլ բացասական:

Բացասական մոդելները ավելի արագ ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն: Արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ինչպես ընտանիքում, այնպես էլ ուսումնական հաստատություններում: Ուսուցիչը առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ հնարավորություն է ստանում սերմանել քաղաքական, բարոյական, գեղագիտական, իրավական, բնապահպանական և այլ գիտելիքներ և վերաբերմունք:

ՈՒՍՈՒՑՉԻ ԴԵՐԸ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Մեր օրերում էականորեն փոխվել է ուսուցչի դերը հասարակության մեջ: Մանկավարժական գիտությունը մեծ ուշադրություն է դարձնում ուսուցչի դերի լիարժեք կայացմանը, որի մեջ մտնում են ուսուցչի մասնագիտական ունակությունները, կարողությունները, հմտություններն ու էթիկան: Ուսուցիչը երկու դեր է կատարում աշակերտի կյանքում: Առաջին՝ նրա մարդ ձևավորելու գործում, և երկրորդ՝ նրա կրթության հարցում: : Ուսուցչի աշխատանքը բոլոր ժամանակներում էլ եղել է հարգված ու պահանջված աշխատանք: Այն բժշկության հետ միասին հասել է մինչև մեր օրերը դարերի խորքից: Ոչինչ երբեք չի կարող փոխարինել ուսուցիչ-դաստիարակին, նրա մանկավարժական վարպետությանը, կուլտուրային և իհարկե ամենակարևորին՝ հեղինակությանը պայմանավորված է նրա թե՛ անձնային, թե՛ մասնագիտական որակներով: Նրա դերից և աշխատանքի որակից է կախված, թե վաղն ինչ անհատներ կյանք կմտնեն, ինչ արժեհամակարգով և ովքեր կձևավորեն մեր հանրությունը՝ որոշելով պետության ապագան: Շատ կարևոր է նաև ուսուցչի մարդ տեսակը, նրա վարքագիծը, քանի որ նա վառ օրինակ է հանդիսանում աշակերտի համար: Կյանքն ավելի բարձր է խոսում, քան խոսքերը:

Ուսուցչի դերը բազմազան է: Մեզանում ուսուցիչը սովորաբար ընկալվում է որպես սովորեցնող՝ ակադեմիական գիտելիքը մեխանիկորեն փոխանցող անձ: Հաճախ նույնիսկ կիրառվում է ոչ թե ուսուցիչ, այլ՝ դասատու բառը. այսինքն՝ ուսուցիչը ընկալվում է նույնիսկ ոչ թե որպես սովորեցնող, տեսական և գործնական հմտություններ փոխանցող, այլ ընդամենը դաս տվող, վարժեցնող անձ (հատկանշական է, որ նախկինում տարածված էր վարժապետ եզրույթը, որն այժմ կիրառվում է ծաղրանքի համատեքստում): Ըստ էության, տեղի է ունեցել ուսուցչի դերի աղավաղում ծնողների, աշակերտների և լայն հասարակության ընկալումներում: Մինչդեռ ուսուցչի դերն ավելի բազմազան ու բազմաբովանդակ է, քան պարզապես դաս տվողի, ինչ-որ բան սովորեցնողի դերը: Եթե դիտարկենք ուսուցչի կամ ընդհանրապես դպրոցի դերը երեխայի կրթության իրավունքի իրացման հարցում, ապա թերևս որպես առաջին և ամենակարևոր դերերից մեկը կառանձնացնեի ուսուցչի կամ դպրոցի դերը՝ որպես սոցիալական հավասարակշռողի կամ հավասարակշռությունը պահպանողի: Գաղտնիք չէ, որ Հայաստանի տարածքային անհամաչափ սոցիալ-տնտեսական զարգացման արդյունքում հասարակությունը ևս, իր սոցիալական բաղադրիչով, բազմաշերտ է: Միևնույն դպրոցում կամ դասարանում սովորում են տարբեր սոցիալականտնտեսական կարգավիճակ ունեցող ընտանիքների կամ տարբեր կենսապայմաններում ապրող երեխաներ: Հետազոտությունները վկայում են, որ ավելի լավ կրթություն ստացած ծնողների երեխաները առավել մեծ հավանականություն ունեն

հաջողության հասնելու կրթության ասպարեզում, քան, օրինակ, այն երեխաները, որոնց ծնողները չունեն բարձրագույն կրթություն: Տվյալ դեպքում, դպրոցը և ուսուցիչը պարտավոր են լրացնել ընտանիքի կամ ծնողների կրթվածության մակարդակի բացը՝ հավասարակշռելով և հնարավորություն տալով երեխային լիարժեք իրացնել կրթության իրավունքը: Ուսուցիչը կարող է մեղմել նաև ընտանիքներում առկա անբարենպաստ հոգեբանական մթնոլորտի ազդեցությունը՝ օգնելով երեխային լիարժեք ներառվել թե՛ դասապրոցեսում, թե՛ հանրային կյանքում: Պետության քաղաքականության մշակման տեսանկյունից սա շատ կարևոր է. այն պետությունները, որոնք ունեն սոցիալական արդարության տեսլական, հստակ քայլեր են ձեռնարկում կրթության մեջ յուրանքանչյուր երեխայի կարիքների վերհանման և որակյալ հանրակրթությունը հատկապես խոցելի ընտանիքների երեխաների համար առավելագույնս մատչելի ու հասանելի դարձնելու համար:

Երեխայի խնամողին փոխարինողի դերը: Հաճախ դասապրոցեսում ուսուցիչը բախվում է բուն ակադեմիական կրթության հետ չառնչվող երևույթների, ինչպիսիք են, օրինակ, սովորողների միջանձնային կոնֆլիկտները, առանձին երեխաների՝ տվյալ պահի հուզմունքը կամ տարբեր պատճառներով պայմանավորված բարդ հոգեվիճակը, տրամադրության անկումը և այլն: Այստեղ արդեն կարևորվում է ուսուցչի՝ ոչ այնքան կրթողի, որքան աջակցողի ու խնամողի դերը: Ուստի կարևոր է, որ ուսուցիչն ունենա անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ՝ այդ դերը ստանձնելու և իրավիճակն արդյունավետ հասցեագրելու համար:

Ուսուցիչը՝ որպես ռեսուրսի աղբյուր: Տվյալ դեպքում որպես ռեսուրս կարելի է դիտարկել և՛ գիտելիքը, և՛ հմտությունները, և՛ կենսափորձը: Հաճախ ուսուցիչը երեխայի համար դառնում է հեղինակություն և շատ դեպքերում ավելի բարձր հեղինակություն, քան հենց երեխայի ծնողները: Շատ կարևոր է, թե ինչ աշխարհայացքի, ինչ արժեհամակարգի, ինչ ռեսուրսների կրող է ուսուցիչը և այդ ռեսուրսը երեխաներին փոխանցելու ինչպիսի հմտություններ ունի: Շատ կարևոր է, որ ուսուցիչն ընդհանրապես զերծ լինի որևէ տեսակի կարծրատիպերից: Եթե ուսուցիչը, օրինակ, ունի կանխակալ վերաբերմունք որոշակի խմբի երեխաների նկատմամբ, ապա արդյունավետ ուսուցում, բնականաբար, չի ստացվի: Ունենք հետազոտություններ, որոնք վկայում են ուսուցիչների շրջանում գենդերային կարծրատիպերի առկայության մասին: Արդյունքում կրթության իրավունքի հավասար իրացման հնարավորությունների տեսակետից խոցելի են դառնում աղջիկները: Օրինակ, ուսուցիչը մտնում է դասասենյակ՝ ի սկզբանե համարելով, որ կան ինչ-որ դերեր կամ մասնագիտություններ, որոնք բնորոշ են միայն աղջկան կամ միայն տղային, կամ, որ միայն տղան կարող է ունենալ մեծ ընկերական շրջապատ, պաշտոն զբաղեցնել կամ որոշակի ոլորտում կարիերա անել, իսկ աղջիկը՝ ոչ: Լինելով նման գենդերային կարծրատիպերի կրողը և այդ կարծրատիպերով դասարան մտնելով՝ ուսուցիչն արդեն իսկ վտանգում է հավասարության և խտրականությունից զերծ սկզբունքի հիման վրա դասավանդումը: Կարծրատիպերը կարող են լինել ոչ միայն գենդերային, այլև

կրոնական, ռասայական, սոցիալական և այլն։ Նույն կերպ, եթե ուսուցիչը դասասենյակ է մտնում ի սկզբանե կանխակալ վերաբերմունքով, օրինակ, ընտանեկան բռնության մեջ ապրող կամ հարբեցող ծնող ունեցող երեխաների նկատմամբ, ապա տվյալ խմբի երեխաներրը մարգինալացվում են դասասենյակում, և վտանգվում է նրանց կրթության իրավունքը։ Ցավոք, ոչ միշտ են ուսուցիչների կողմից լիարժեքորեն ընկալվում իրենց՝ ռեսուրս կրողի և հավասարակշռողի դերերը։

Ուսուցչի՝ մոտիվացնող և քաջալերող դերը պակաս կարևոր չէ սովորողների հաջողության գործում: Մենք բոլորս էլ դպրոցում սովորելու տարիներին ունեցել ենք գոնե մեկ ուսուցիչ, որը մշտապես օգնել ու քաջալերել է մեզ՝ ավելի մեծ ձեռքբերումների և բարձունքների հասնելու համար: Նույնիսկ եթե առաջին հայացքից երեխան չի ցուցաբերում մեծ հետաքրքրվածություն կամ ակնհայտ ունակություններ այս կամ այն առարկայի նկատմամբ, դեռ չի նշանակում, որ նա ընդունակ չէ սովորելու կամ կրթվելու: Ուշադիր և քաջալերող դերը ստանձնած ուսուցիչը չի հանձնվի, այլ կշարունակի փնտրել հնարավորություններ՝ երեխային մոտիվացնելու և քաջալերելու սովորել, բացահայտել նոր աշխարհ: Դժվարությամբ սովորող, առարկայի ու ուսուցման նկատմամբ ակնհայտորեն ուշադրություն և հետաքրքրվածություն չցուցաբերող երեխաների առկայության պարագայում կարևոր է, որ ուսուցիչը անտարբեր չլինի և ժամանակին նկատի ու սահմանի խնդիրը, ծնողի և սովորողի հետ միասին նշագծի հաջողության հասնելու ուղին և հաստատակամորեն առաջնորդի սովորողին:

ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ԴԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑ

Ժամանակակից աշխարհում որտեղ ապրում, աշխատում և փորձում ենք քայլել կյանքին համընթաց, չենք կարող չնդունել, որ շատ կարևոր է տիրապետել օտար լեզվի քանզի եթե ուզում ենք տիրապետել մեր շուրջ կատարվող իրադարձություններին հենց բնօրինակից ապա պետք է կարևորել օտար լեզվի ուսուցումն ու տիրապետումը: Բացի ինտելեկտուալ և կիրթ մարդ դաստիարակելը մեզանից պահանջվում է աշակերտին ծանոթացնել օտար մշակույթին, արժեհամակարգին ընդծելով դրական և բացասական կողմերը: Աշխարհում շատ երկրներ կան, և նրանց բնակիչների խոսած լեզուներն էլ ավելի շատ են: Եվ այս դեպքում խոսքը ոչ թե հարյուր, այլ մի քանի հազարի մասին է: Ինչպե՞ս կարող է երկրի բնակչությունը հասկանալ միմյանց: Բայց այս նպատակին ծառայում են միջազգային լեզուները, որոնք մեզ բոլորիս թույլ են տալիս շփվել միմյանց հետ՝ անկախ ազգությունից և բնակության վայրից: Նրանցից մեկը ռուսերենն է: Ավելին, ռուսերենը ողջ մարդկության համար միջազգային հաղորդակցության լեզու է: Ռուսերեն լեզվի կարևորությունը ժամանակակից աշխարհում դժվար է գերագնահատել: Չնայած իր բազմազան տարբերակներին և յուրաքանչյուր ազգության համար հատուկ հատկանիշների առկայությանը, ռուսերենը շարունակում է մնալ ամենատարածված լեզուներից մեկը մեր աշխարհում: Ռուսերեն լեզվի կարևորությունը ժամանակակից աշխարհում այնքան մեծ է, որ դրա իմացությունն արտոնություն կամ շքեղություն չէ: Այսօր կարիք չկա վիճել ռուսաց լեզվի դերի և նշանակության մասին մարդու կյանքում: Ձեռնարկությունները մտնում են համագործակցության նոր ձևի մեջ. Հաստատվում են նրանց անմիջական կապերը օտարերկրյա գործընկերների հետ, իրականացվում են համատեղ հետազոտական և մշակման և փորձարարական աշխատանքներ: Այդ նպատակների համար ստեղծվում են գիտնականների և մասնագետների համատեղ թիմեր: Ավելի ու ավելի ակնհայտ է դառնում, որ օտար լեզվով խոսող մասնագետներին նպատակահարմար է արտագնա աշխատանքի ուղարկել:

Օտար լեզուն՝ որպես ակադեմիական առարկա, կարևոր տեղ է գրավում երիտասարդների դպրոցական կրթության մեջ: Օտար լեզուն հարստացնում է մեր հորիզոնը պատմության, աշխարհագրության, գրականության, արվեստի, երաժշտության մասին տեղեկատվությամբ, ծանոթանում ուսումնասիրվող լեզվի երկրների կյանքին և մարդկային արժեքներին: Ռուսաց լեզվի իմացությունը կյանքի ճանապարհին հաջողության գրավականներից մեկն է, թույլ է տալիս մեկ քայլ ավելի բարձրանալ՝ դրանով իսկ հարստացնելով նրանց գիտելիքներն ու մտավոր կարողությունները՝ նրանց կյանքը դարձնելով հետաքրքիր և բազմազան: Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ ժամանակակից աշխարհում մարդը ձգտում է կարիերայի աճի,

ավելի ընդարձակ հաղորդակցության, տարբեր աղբյուրներից վերջին տեղեկությունները ստանալու, իր կյանքի հեռանկարների ընդլայնման և, վերջապես, պարզապես ավելի հետաքրքիր և բազմազան կյանքի: Այս ամենի հետ մեկտեղ թույլ է տալիս համեմատականներ անցկացնել օտար և հայեցի արժանիքների միջև և գնահատել մերը, քանզի հայի արժանիքներն ամենա բարձրն ու վեհն են:

Օտար լեզվին որպես հաղորդակցման միջոց տիրապետելու հիմնական պայմանը լեզվի և մշակույթի համատեղ ուսումնասիրությունն է: Առանց թիրախային լեզվի աշխարհի մասին նախնական գիտելիքների, դուք չեք կարող ակտիվորեն օգտագործել դրանք: Օտար լեզուների դասավանդման հատկապես կարևոր նորամուծությունը ձևակերպված է հետևյալ կերպ. օտար լեզու և աշխարհ մայրենի լեզվի և սովորողի աշխարհի հետ համատեղ ուսուցում: Օտար լեզուներ սովորելու և դասավանդելու երկու սկզբունք կա.

- 1-ին սկզբունքը հիմնված է մի պարզ փաստի վրա. միջմշակութային հաղորդակցության մեր գործընկերները մեզանից կարիք ունեն ոչ միայն իրենց աշխարհի, այլև ավելի մեծ չափով մեր աշխարհի իմացության: Այսինքն՝ օտարերկրացիները մեզ հետ շփվելու են ոչ միայն մեզնից իրենց աշխարհի մասին սովորելու, այլեւ մեզնից մեր աշխարհի մասին տեղեկություններ ստանալու համար:
- Սկզբունք 2 - հիմնված է այս լեզուն որպես հաղորդակցման միջոց օգտագործող մարդկանց օտար լեզվի և մշակույթի համատեղ ուսումնասիրության վրա: Այս սկզբունքը ինտենսիվորեն ներդրվել է ուսումնական գործընթացում: Այնուամենայնիվ, լիարժեք և արդյունավետ հաղորդակցությունը լիովին իրականացվում է միայն հայրենի աշխարհի իմացության պայմանով:

Սովորողների անձի արժեքների ձևավորման առումով հանրակրթության մեջ ուրույն նշանակություն ունեն ուսուցանվող օտար լեզուները, մասնավորապես նկատի ունենք ռուսաց լեզուն, որով ստեղծված համաշխարհային նշանակության գրական կոթողներն ունեն սերունդ կրթելու և մարդկային հատկանիշներով նրանց դաստիարակելու հսկայական ներուժ: Ահա թե ինչու հանրակրթական դպրոցում ռուսաց լեզվի և գրականության դասավանդումը դուրս է գալիս սոսկ օտար լեզու և օտար մշակույթ ուսուցանելու նեղ շրջանակից և վերածվում սովորողների գեղագիտական, բարոյական, հոգևոր արժեհամակարգը ձևավորելու մի միջոց, որի դերը չպետք է թերագնահատել: Ռուսաց լեզվի անթիվ հարստությունները փոռելով սովորողների առջև՝ անուղղակիորեն նրանց դաստիարակում ենք այլոց հոգևոր արժեքները ճանաչելու և գնահատելու բարոյական պատրաստակամությամբ, իսկ ռուս գրականության մարգարիտները հարստացնում են սովորողների հոգևոր պաշարները և հղկում գեղագիտական ճաշակը, ինչը էական նշանակություն ունի նրանց արժեհամակարգի լիարժեքության առումով:

Որպես ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի՝ սեփական փորձով կարող եմ հավաստել, որ աշակերտի արժեհամակարգը պետք է ձևավորել ներդաշնակության սկզբունքով, որում իր ուրույն տեղը պետք է ունենա հնարավորինս սերտ

հաղորդակցումը օտար մշակույթին և լեզվին՝ որպես մշակույթի մի տարատեսակի:

Նվիրական ու մեծագույն արժեքի՝ հայրենասիրության զգացումը դաստիարակելու համար ռուս գրականության դասընթացը բազմաթիվ հիանալի հնարավորություններ է ընձեռնում: Կարելի է հիշատակել Լև Տոլստոյի <<Պատերազմ և խաղաղություն>> էպոպեայի ուսուցումը, որն իրականացվում է այն գերագույն նպատակադրումով, որ նրանով կարելի է ոչ միայն ռուս, այլև ցանկացած այլազգի դպրոցականի հոգում վառել հայրենասիրության կրակը՝ վեպի հերոսների, նրանց գործողությունների անձնազոհության ու հայրենասիրության բացահայտումներով: Հայրենասիրությունը այն մեծ արժեքն է, որը հարգանք և պատկառանք է հարուցում նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ:

Յուրաքանչյուր ուսուցիչ ունի հեղինակ կամ ստեղծագործություն, որը նրան ամենադյուրին կերպով օգնում է իր մանկավարժական խնդիրները լուծելու, տվյալ դեպքում՝ հայրենասիրության բարձրագույն արժեքը սաների հոգիներում սերմանելու համար:

Մեզ համար դա տարիներ ի վեր եղել է և մնում է համաշխարհային գրականության այդ հսկայի՝ Լև Տոլստոյի վերոհիշյալ ստեղծագործությունը:

Ուսուցչի ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, սերը երեխաների նկատմամբ, ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:

<<Եթե դուք ունակ ենք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու երջանկությունը>>:

Ռուսերենի ուսուցման գործընթացում հանդիպում ենք տարբեր տիպի դասերի, որոնք մեծ դեր են խաղում արժեհամակարգի ձևավորման գործում :

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնական հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում:

Ռուսաց լեզվի ուսուցման նպատակները բազմազան են: Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում:

Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատակն, խմբային, էքսկուրսիա, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում ավելի ազատ է արտահայտում իր միտքն ու դատողությունները, գործում է անկաշկանդ՝ ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը:

Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում է համառություն, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ:

<<Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որը հաճախ արտահայտում է նրանց ինքահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի նկատմամբ>>:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՐԴԻ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՊԱՀԱՆՋ

Երեխաների արժեհամակարգի ձևավորումը արդի մանկավարժության կարևոր պահանջներից է: Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում այսօր արժեքային կրթությունը հասարակության հուզող խնդիրներից մեկն է: Կրթության նպատակը աշակերտին ոչ միայն գիտելիքով զինելն է, այլև նրա մեջ բարոյական որոշ հատկանիշներ ձևավորելը:

Արժեքային կրթության նոր՝ արևմտյան մանկավարժության մեջ մշակված մոտեցման հիմքում մտածողական հմտությունների ձևավորման սկզբունքն է: Ըստ սրա՝ աշակերտներին պետք է օգնել իմաստավորելու որոշակի արժեքներ՝ նրանց պետք է խրախուսել սեփական կենսափորձի զանազան հարցադրումների միջոցով որոշել, թե իրենք ինչպիսի մարդ են ուզում դառնալ, ինչպիսի ավանդույթներ արժե պահպանել: Այս երկու մոտեցումներն էլ խոցելի կողմեր ունեն: Առաջինը երբեմն քարոզչական և ձևապաշտական բնույթ է ձեռք բերում. երեխաները լսում են, թե որքան լավ բան է ազնվությունը, արդարությունը, տարեցների նկատմամբ հոգատարությունը և այլն, սակայն կյանքում տեսնում են արժեքների խախտումիրենց ուսուցիչների, ծնողների կամ շրջապատողների կողմից: Բնական է, որ այդ դեպքում դրանք վերացական արժեքներ են մնում և նրանց կերպարի մաս չեն դառնում:

Արժեքները երեխաներին ներկայացվում են առաջին հերթին գրական, պատմական հերոսների օրինակով, նաև ուսուցչի վարքագծով: Շատ կարևոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել դասագրքերի նյութերին, ինչպես նաև հերոսների վարքագծի վերլուծությանը և դրա միջոցով որոշակի արժեքների բացահայտմանը: Վերլուծությունը ենթադրում է երեխաների գործուն մասնակցություն, այսինքն՝ աշակերտը պետք է հնարավորություն ունենա ազատորեն արտահայտելու իր կարծիքը, զգացմունքները, որոշակի հարցադրումներ անելու, ընկերների հետ քննարկելու, դատողություններ անելու հերոսների վարքագծի մասին, գնահատելու և իրենց համար բացահայտելու այս կամ այն արժեքը:

Մյուս կարևոր սկզբունքն այն է, որ արժեքը պետք է սովորել ոչ թե լսելով այլ կիրառելով: Դրա համար, անշուշտ, պետք է ընտրել գործունեության այնպիսի ձևեր, որոնք համապատասխանում են երեխաների տարիքին: Շատ կարևոր է նաև խրախուսանքը: Խրախուսելով երեխային, կարելի է ոգեշնչել, մղել որոշակի գործողությունների, ազդել նրա զգացմունքների վրա և այդպես նպաստել նրա մեջ որոշակի արժեքների ամրապնդմանը:

Քաղաքավարությունն ու բարեկրթությունը, որպես արժեքային համակցություններ՝ բնութագրում են անձի՝ շրջապատող մարդկանց նկատմամբ հարգալից հարաբերություններ ձևավորելու ձգտումը:

Տեղեկատվական գործառույթի տեսանկյունից լեզուն դիտարկվում է, որպես հաղորդման, մարդկության փորձի ու իմացության և լեզվական ձևակերպման միջոց։

Ազգային-մշակութային ավանդույթների պահպանման և փոխանցման գործառույթն իրականացնում է ժամանակների միջև կապը, որը հնարավորություն է ընձեռնում լեզվի ու գրականության մեջ պահպանել ազգային մշակույթը և փոխանցել սերնդեսերունդ։

Շփման գործառույթը ենթադրում է համամարդկային մշակույթի յուրացում՝ հատկապես գեղարվեստական ստեղծագործությունների թարգմանությունների միջոցով։

Հուզական գործառույթը կապված է հույզերի և զգացմունքների արտահայտման հետ։ Այն կարևոր դեր ունի նաև առօրյա շփումներում։

Գթասրտությունն արտահայտում է այլոց դժբախտության և խնդիրների նկատմամբ զգայուն վերաբերմունքի միջոցով։ Կարեկցանքը անձի, այլոց զգացմունքների նկատմամբ համարժեք ապրումն է։ Ուսումնական յուրաքանչյուր առարկա զարգացնում է աշակերտի անձի որևէ կողմ։ Այսինքն այդ առարկաներից յուրաքանչյուրը անձի արժեքային կողմնորոշումների ձևավորման տեսանկյունից ունի իր առանձնահատկությունները։

Լեզվական գործունեության իրականացման գործառույթը նպաստում է հաղորդակցական արժեքի ձևավորմանը։ Լեզվական իմացությունը նշանակում է տվյալ լեզվի բառապաշարի, լեզվական և դարձվածքային միավորների իմացություն, բառակազմական, ձևաբանական, շարահյուսական, ոճական, գրականագիտական գիտելիքների ձեռքբերում, լեզվի քերականական յուրացում։

Հաղորդակցման իրազեկումը ենթադրում է խոսքային գործունեության բոլոր տեսակների հաղորդակցման մշակույթի տիրապետում։ Վերջին տարիներին լեզուների ուսուցման նպատակներին նվիրված հետազոտություններում շեշտադրվում են կրտսեր դպրոցականների զարգացման խնդիրները՝ հատկապես մտավոր զարգացման, լեզվական մշակույթի բարձր մակարդակի, գեղագիտական ճաշակի ձևավորման և բարոյական կատաարելագործման տեսանկյունից։ Մարդկային արժեքներին երեխայի հաղորդակցման հիմք են հանդիսանում բարոյագիտական առանձնահատուկ գիտելիքները և ուսուցման ողջ համակարգի դաստիարակչական-բարոյագիտական ուղղվածությունը։

Փորձենք ձևակերպել, թե ինչ է ի վերջո <<արժեք>> ասվածը։ Արժեքը երևույթ է մեր կյանքում, որի դիմաց մենք գին ենք վճարել։ Վճարի արժույթը կարող է տարբեր լինել՝ հույզեր, այլ արժեքների զոհաբերություն, հարազատների, հայրենակիցների կամ նախնիների կորուստ, կորցրած հող, հայրենիք և այլն։ Առանց արժեքների կյանքը դատարկ է։ Հեշտ, առանց կորուստների հաղթահարումների ապրելը, երբեք չի երջանկացնում հենց այն պատճառով, որ չի բերում արժեքների ձևավորման։

Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատուն են էթիկական նորմերը, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել։ Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ և այդ պայքարում

պարտավոր է հաղթել։ Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել աշակերտի համար, նա պետք է զգա և ցավ, և ուրախություն, ունենա թե դժբախտություններ, թե հաղթանակներ։ Երեխան դպրոցում պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք։ Այդ ամենի պտուղը կլինի իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արված, բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող ճշմարտություններ։ Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձևավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ ու ամենաիմաստալից կրթական համակարգը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս հետազոտական աշխատանքը շոշափում է այնպիսի թեմա, որ անկասկած մեծ դեր ու նշանակություն ունի Հայաստանի և հայ ազգի համար: Խոսքը գնում է արժեքների ձևավորման մասին դասապրոցեսի ժամանակ՝ հատկապես օտար լեզվի: Այստեղ անմասն չի մնում ուսուցչի դերն ու կարևորությունը: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկանները մասնավորապես այս աշխատանքում՝ օտար լեզուն: Հետազոտական աշխատանքում անրադարձել եմ ուսուցչի կարևորագույն դերին, նրա կատարած մեծ, բայց մեր օրերում չգնահատվող աշխատանքին: Ուսուցչի մանկավարժական վարպետությունը, տակտն ու հեղինակությունը մեծ դեր են խաղում աշակերտների բարոյական դաստիարակության գործում: Ըստ ամենայնի խրախուսելով և զարգացնելով աշակերտների նախաձեռնությունն ու ինքնուրույնությունը՝ ուսուցիչը շտկում է նրանց հետ հարաբերությունների ոճը նրանց աճող ինքնուրույնության համապատասխան:

Ժամանակակից սերնդի առջև ծառանում է նոր ժամանակի պահանջներին համապատասխան վերափոխվելու, կարողությունները զարգացնելու և իրացնելու խնդիրը: Դա ազդում է երիտասարդ սերնդի մտածելակերպի, գործելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա: Ներկայումս կրթությունը վերածվել է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային անհրաժեշտ որակներ: Կրթական միջավայրի և կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների և մեթոդների վերանայում, կրթության նկատմաբ պետական և հասարակական հոգածության արմատական բարելավում: Արժեքային համակարգի ձևավորումը կարևորվում է նաև այն պատճառով, որ որոշակի արժեքային համակարգի հենքի վրա կառուցված գործողությունները ճանաչելի են և հետևաբար ընդունելի, քանզի դրանք սկիզբ են առնում ազգային, համամարդկային ընդհանուր սկզբունքներից, նորմերից և օրենքներից: Այս տեսանկյունից դիտարկելիս կարևոր է անհատ քաղաքացու արժեհամակարգի ձևավորումը: Կրթությունը մարդակենտրոն գործընթաց է, ազգի հիմքը կրթությունն է և ցանկացած լավ ու արժեքավոր բան հենց կրթությամ միջոցով է, որ փոխանցվում է մարդկանց, տարածվում է հասարակության մեջ, դաստիարակում մատաղ սերնդին: Կրթության ողնաշարը, կրթության առանցքը՝ արժեհամակարգն է: Ցանկացած մարդու համար արժեքային համակարգը այն է, ինչ այդ մարդն ինքն իր համար արժեք է համարում: Մանկավարժը պետք է սեփական օրինակով դաստիարակի սանին, օրինակ ծառայի, որովհետև օրինակի ուժը զորավոր է: Այն երկիրն է հավակնում ունենալ լավ կրթական համակարգ,

որը ոչ միայն գիտելիքի փոխանցումը, կարողություն-հմտություն ձևավորումն է ապահովում, այլև իսկապես պատասխան է տալիս սովորողի արժեքային վերջնաարդյունքների մասին բոլոր հիմնահարցերին։ Դրանք են՝

1. Լինել հայրենասեր, օրինապահ, ազնիվ, մարդասեր, պատասխանատվությամբ օժտված, նախաձեռնող ու հասարակական գործուն դիրքորոշում ունեցող քաղաքացի
2. Դրսևորի փոխըմբռնում և կարողանա համագործակցել ինչպես տարեկիցների, այնպես էլ ծնողների, իրենից մեծերի ու փոքրերի հետ և այլն։

Յուրաքանչյուր ուսուցչի առջև կանգնում է իր առարկայի ուսումնական դասընթացի նյութերով արժեքների համակարգի ձևավորման, սովորողների անձի դաստիարակության խիստ բարդ խնդիրը։ Որպեսզի յուրաքանչյուր ուսումնական առարկա յուրաքանչյուր սովորողի համար առանձնային նշանակություն ունենա, անհրաժեշտ է, որ դասի ընթացքում ստեղծվի ստեղծագործական, համագործակցության մթնոլորտ, խրախուսվի իմացական ցանկացած գործընթաց, խրախուսվի յուրաքանչյուր նախաձեռնություն, յուրաքանչյուր իմացական փորձ։

Այսպիսով արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Իլյինակի Խ. Ռուսաստանի կրթության <<արդիականացումը>> համաշխարհային գլոբալացման համատեքստում
- <<Կրթությունը XXI դարում>> գիտակրթական հանդես Երևան 2014թ.
- Հանրակրթության առարկայական չափորոշիչային վերջնաարդյունքները և օրինակելի ծրագրերը
- Զենալյան Ն. Ա., Անձնային արժեք հասկացությունն անձի տեսություններում, Երևան 2017թ.
- Սերգեյ Իվանովիչ Օժեգով <<Մարդ և բառարան>> 1964
- Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում, Երևան, 1987թ.,
- Մուդրիկ Ա. Վ., Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում, Երևան, 1986թ.,
- Բաբանսկի Յու. -Աշակերտների դաստիրակությունը կոմպլեքսային մոտեցում
- Առարկայական չափորոշիչներ.https://escs.am/am